

Եւ վերջապէս, որովհետեւ գրեթէ
ներսեայ են աւելի կամ նուազ
թուով հայ անհատներ, որոնք,
կարծում են թէ անկարելի է
ուրոյն կուսակցութիւններով,
բաժանուած ոյժերով, իրադրոժել
այն մեծ նպատակը, որի համար
անհրաժեշտ է բոլոր կուսակցու-
թիւնների միացումը միեւնոյն
ծրագրի տակ, — այդ պատճառով
էլ գոյութիւն ունի Միութենա-
կանների կուսակցական բանակը:

Մենք չենք խօսում Արմենա-
կանների մասին, քանի որ նը-
րանցից կամ ամենեւին չեն
մնացած ասպարէզի վերայ և կամ
չեն փոքրամասնութեամբ:

Ահա՛ Յեղափոխական իրակա-
նութիւնը իւր բոլոր մերկու-
թեամբ իրականութիւնն աւելբը
ի վերջոյ, զուտ մտաւորական է,
հոգեբանական է: Ահա՛ կուսակ-
ցութիւնների գոյութեան պատ-
ճառը:

Որքան էլ տխուր լինի հաս-
տատել, և սակայն անհերքելի
ճշմարտութիւն է որ կուսակցու-
թիւնները, փաթաթուած իւրա-
քանչիւրը իրեն սիրելի պաշտե-
լի դարձած թշուրի մէջ, ամուր
կառչում են նրանց և չեն ու-
զում ոչ մի գնով պակ գալ նրան-
ցից: չեն ուզում մատի ծայրով
իտի մօտենալ նրանց պարունա-
կութեան, որ թուով է, միան-
գամ ընդ միշտ վայր բերուած,
հաստատուած, ժամանակի և սո-
վորութիւնների կնիքով կնքուած,
իրաքանչիւրի հոգեբանութեան
մէջ խորունկ դրօշմուած և նուր-
բագործուած, տիրաբար հրա-
մայում է նրանց, իշխում է նը-
րանց, շարժում է նրանց: Ծրա-
գիրները ֆէթիշներ, կուսքեր
են դարձած, որոնց կուսքար
հնազանդում են նրանց պաշտոն
մատուցանողները, առանց ըն-
դունելու ս'րեւ զիջում, ս'ր և է
բարձում, ս'րեւ յաւելում, ս'րեւ
վերաքննութիւն...:

Ծրագիրները — ահա՛ մեր ան-
միաբանութեան պատճառները:
Ուրիշ ի՞նչ կարող է լինել: Անձ
նակա՞ն խնդիրներ. բայց դրանց
վերայ մի՞թէ կարելի է երկար
կանգ առնել, դրանք մի՞թէ
բաւական են արդարացնելու կու-
սակցութիւնների ուրոյն գործու-
նէութիւնը: Եւ ի՞նչ նշանակու-
թիւն ունի կամ կարող է ունե-
նալ այս կամ այն անհատը Հայ-
րենիքի ազատութեան մեծ գոր-
ծին համար: Մի՞թէ անձնական
խնդիրները կարգադրելը այն-
պէ՛ս դժուար, այնպէ՛ս անկարե-
լի գործ է, որպէսզի նրանք
կարող լինին խափանել գործող
ոյժերի ամբողջացումը, անջատ
մարմինների միասին գալը, որ
զուտ հաւաքական գործ է:

Տոհմային կամ ցեղային տար-
բերութիւններ: Բայց չէ՞ որ վա-
ղուց, շատ վաղուց վերջացած,
խալառ արմատախիլ եղած են

Հայութեան ծայրից ալիւսայլ,
բազմաթիւ տոհմային նախա-
րական տները՝ որոնք անցեա-
լի Ազգային գոյութեան մի մի
սիւնները լինելով հանդերձ մըշ-
տական խռովութեան, մշտական
երկպառակութեան մէջ էին պա-
հա՛մ երկիրը եւ իրենց անմիա-
բանութիւններով յաճախ պատ-
ճառ էին գառնում երկրի աւել-
ման, ամեն տեսակ աղէտների
ու չարիքների, ջլատելով, խան-
գարելով ազգային պաշտպանու-
թեան յատկացուող ոյժերի միա-
թիւնը, ամբողջութիւնը՝ ընդ-
հանուր թշնամու գէ՛մ: Նրանք,
այդ նախաբարութիւնները ոչըն-
չացած են վերջնականապէս,
անդառնալի կերպով: Ժամանա-
կը խորտակեց այդ սիւները,
այդ բարձրութիւնները, ուրիշ
բան չլինելով իր ետեւից,
բայց միայն ցեղային միատե-
սակ հարթ-հաւատար ժողովուրդ՝
հայկական բնագաւառներում:

Մէ, ո՛չ, չկալ ուրիշ բան՝ բա-
ցի ծրագիրներից, որոնցից գա-
լիս են միայն և միմիայն ամեն
չարիքներ, ամեն աղէտներ և
որոնք գուցէ միակ պատճառնե-
րը կ'լինին, եթէ անկարելի լինի
մեզ գարմանել գրութիւնը մեր
իմաստութեամբ, նպատակի վիժ-
մաննպատակիոր վերջապէս մի
այդ բոլոր ծրագիրների մէջ, այդ
բոլոր ծրագիրների համար, որքան
էլ նրանք իրարից տարբերու-
թիւններ են երկայացնեն երկ-
րորդական կէտերի վերայ:

Արդ, որուած լինելով այն
խոշոր հակասութիւնը, որ կայ
որ վաղուց բացուած է, որպէս
խոր, որպէս ամենի վիճ, մէկ
կողմից հայկական բան իրակա-
նութեան եւ միւս կողմից այդ
ծրագիրների ուրոյն գոյութեան
պատճառների միջև, որուած
լինելով ընդհանուր հայ ժողովուր-
դեան և նայն իրենց, Յեղափո-
խական կուսակցութիւնների, սը-
պէս կուսակցութիւնների, և ոչ
անհատների կամ խմբակների,
ցանկութիւնը, կամքը, ձգտումը
նայն իսկ այդ նկատմամբ գոր-
ծադրուած աշխատանքները տըր-
ուած լինելով վերապէս Հայ-
րենիքի պահանջը և տարրական
ողջմտութիւնը, — մենք կար-
ծում ենք որ պէ՛տք է վերջա-
պէս ըմբռնել, համոզուել և հա-
կերպել այն անողք անհրաժեշ-
տութեան, որ պահանջում է մի
անգամ ընդ միշտ պատառել այդ
ուրոյն ծրագիրները և կալմեր
պատրաստել նրանցից մի և նոր
ծրագիր, որ համապատասխան
ներկայանայ ժամանակի ոգուն,
Ազգութեան շուրջը ստեղծուած
նոր հանգամանքներին եւ որ,
ընդունելով, պահելով իւր մէջ
այդ ուրոյն ծրագիրներից այն
ինչ ընդհանուր եւ հաստատուն
է նրանց բոլորին եւ դուրս նե-

տելով նրանց ամեն մէկից այն
ինչ մասնաւոր է և հետեւաբար
անպէտք՝ ընդհանուրի չահի տե-
սակէտով եւ աննպատակաբար-
մար՝ Ազգութեան անմիջական
և զերագոյն պահանջներին, —
խմբէ, հաւաքէ, կեդրոնացնէ,
ամբողջացնէ իւր մի և ընդհա-
նուր գրօշի տակ լալս՝ կուսակ-
ցութիւնները անխտիր, բալ՝
անկեղծ, բալ՝ յայտնի և ան-
յայտ, գործող և անգործ, նոր
ու հին սյուները, գործունէու-
թեան մի աղղութեամբ, և այդ-
միակ պայմանով վերագործնել
հոգիներին կարողուած կամ կոր-
սուելու վերայ եղող հաւատքը
գէշի նպատակը:

Կրկնում ենք, երբ ամեն
այլ պատճառներ մի կողմ վա-
նելով՝ գալիս ենք եւ յանգում
այն եզրակացութեան որ խըն-
դիւր ուրիշ բան չէ, բայց մի-
այն ծրագրային, որի մէջ խոր-
քը, հիմքը, էութիւնը է եւ մնում
միեւնոյն նպատակը — ընդհա-
նուրի Հայրենիքի Ազատութիւ-
նը՝ այսինքն, խնդիրը պարզապէս
հասկացալութեան աշխարհին
է վերաբերում և ոչ ուրիշ նկա-
տումներ — սրովհետեւ մենք
ամենին չենք ենթագրում որ
մէջ տեղ կենայ որեւէ կուսակցու-
կան ոչ — բարի կամք Միութեան
նկատմամբ — և երբ մենք հա-
մոզուած ենք այդ ճշմարտու-
թեան, կարծում ենք որ նրա-
նից յետոյ ուրիշ բան չէ մնում
մեզ, բայց և թէ անմիջապէս գի-
մել գործապաս միջոցներին,
փնտել ճանապարհներ, իրագոր-
ծելու համար այն՝ ինչ մի ան-
անգամ՝ ընկած է համայնական տակ:

Եւ այդ անկարելի չէ՛ կարելի
է միշտ գտնել մի ճանապարհ,
նախախոռոչաւ գաղա ընդմիջ
և անհրաժեշտ կետերի վերայ,
երբ համոզուած ենք, երբ տես-
նում ենք մանաւանդ թէ՛ ս'ր-
տեղից են գալիս չարիքները:

Միութեան խնդիրը լուծելի
հետեւաբար, անկարելի չէ՛ Այդ
է որ մենք ուզում էինք հաստա-
տելնա կարող է լինել դժուար —
և մենք չենք ծածկում մեզանից
որ նա ներկայացնէ լուրջ դժ-
ուարութիւններ — սակայն ոչ ա-
սում է դժուար, ասում է միայն
դժուար, և ո՛չ անկարելի:

Թէ ի՞նչ գործնական միջոց կա-

րելի է առաջարկել այդ կարե-
ւոր գործը գլուխ հանելու հա-
մար, մենք այդ մասին կը խօ-
սինք յաջորդ համարներով:

ՀԱՅԿԱԿ ԽՈՂԱՊՈՒԼԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՑԻ Տիկին Եօրտան-
քա Գալարըմովա Սեմովա, ըն-
թացաւարտ Գիւլի Կայսերական
համալսարանի, հեռանդներ կըն-
դունի ամեն օր իր բնակարանին
մէջ, Տրակիան փողոց, թիւ 12
Խոյսքականայ ժողովարանի մօտը
Գիւլի ԶԱՓԱՆՈՐ ԵՆ

ՊՈՒՐԿԱՅԻ ԱԶԳ, ՏՈՒՆԸ

Մեր Պատուարժան Ազգայնոց
Ժանօթ է որ 3 տարի առաջ Տեղ-
ւոյ Ս. Խաչ եկեղեցւոյ անու-
ան տուն մը գնուած էր 66000
ֆր. ի պաշտպանական ապահո-
վարական ընկերութեանն որուն
1000 (հազար) ֆրանքը Տիկնայն
լուծեալ ընկերութեան դրամներ
և 2000 ֆրանք ալ տեղէն և Պու-
կարիւն շրջակայ քաղաքներէ
հանգանակուելով վճարուած էր
ու յարգոյ անձնաւորութեան մը
վրայ կը մնայ:

Պակայն անկէ իվեր ինչ ինչ
պատճառներով երեսի վրայ մնա-
ցած դրամատան ունեցած պարտ-
քերն ու տնտեսներն բարդուելով
սոյն տունը ծախուելու մեծ սպառ-
նալիքի տակ էր, ուստի ներկայ
թաւ. Խոյսքաւոր այս յետագայ
չարիքը նախատեսելով փութաց-
չարս անձնաւորութեան բաղկաց-
եալ առժամեայ մասնախումբ
մը ընտրել, հանգանակութիւն
մը կատարելով, տունը վերահաս
վտանգէն ազատել եւ ուղղակի
եկեղեցւոյ անունին փոխանձել:
Առ այս մասնախումբ ընտրու-
ած են հետեւեալ անձինք

Տիարք Յակոբ Գանթարեան
Վրդանէս Աստուածատուրեան
Յովհաննէս Ունճեան
Օհան Պոսթանճիեան

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Վրդանէս Աստուածատուրեան. 70 ֆր.
Գրիգոր Թաշատուրեան 60, Յակոբ
Գանթարեան 50, մի Ոմն 40,80, Գա-
լուստ Ունճիեան 30, Արաքէս պա-
լիկեան 30, Արմաիր Մուրատեան 20,
Նշան Յարութիւնեան 10, Յովհաննէս
Արաքէսեան 10, Պետրոս Կիրակոսեան 5,
Սիմոն Արաքէսեան 5, Յարութիւն 50,
Նիկեան 5, Միսակ Ունճիեան 5,
Նշան Արաքէսեան 5, Մարտիկ Պետ-
րոսեան 5, Կարապետ Պարոտեան 5,
Թովմաս Խաչատուրեան 5, Տոնիկ Ղար-
եան 5, Մուշեղ Աւագեան 5, Վար-
դան Կիրակոսեան 5, Քերոբէ Դանի-
էլեան 5, Թաւուր Արաքէսեան 5,
Յակոբ Արաքէսեան 5, Յարութիւն
Դանիէլեան 5, Աւետիս Վարդանեան 5,
Յովհաննէս Մարտիկեան 5, Պետրոս
Յակոբեան 5, Ղազար Չալուշ Զաքար-
եան 5, Ճրճոյ Չալուշ Խաչատուր-
եան 5, Արմենակ Կարանեան 4, Սար-
գիս Պողոսեան 4, Մկրտիչ Յարու-
թիւնեան 4, Յովհաննէս Տէյրիմէ-
ճեան 3, Ասատուր Զաքարեան 3,
Թորոս Մարտիրոսեան 3, Մի Ոմն 3,
Մովսէս Երկեան 3, Կոնստանտին Աւե-
տիսեան 2, Ղազար Միսաեան 2,
Գրիգոր Մանուէլեան 2,50 Իրահայն Թա-
րութիւնեան 2, Յովհաննէս Արոյեան 2,
Գալուստ Յարութիւնեան 2, Աւետիս
Վարդանեան 2, Յովհան, Մուրատ-
եան 2, Պետրոս Չալուշեան 2, Խա-
չիկ Տէրադեան 2, Գրիգոր Պաղտիկ-
եան 2, Մարտիկ Արաքէսեան 2,
Արքայն Խաչատուրեան 2, Նիկողոս
Յարութիւնեան 2, Մարտիրոս Գէ-
որգեան 2, Միսա Խաչատուրեան 2,
Շահին Գրիգորեան 2, Մեկրէ Սեթ-
րաքեան 1, 50 ասնիթ. Գալուստ
Կարլիէլեան 1, 50 ասնիթ Գէորգի
Սարաֆեան 1, Մանուկ Կիրակոս-
եան 1, Մկրտիչ Արոյեան 1, Ղազար

печатница "Взаимность" — Варна.